5941

# ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

ЗКП1(47.925)
Z-24

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

2 5 AUG 2005
1 DEC 2009
3КП1 (97·925)
Z-24

# ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ
# Բ Ա Ն Ա Ձ Ե Վ Ե Ր Ը

1. ԲԱՆԱՁԵՎ ՀԿ(Բ)ԿԿ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ
2. » ՀԿ(Բ)Կ ՅԵՐՔԱՂԿՈՄԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ
3. » ՔՎՀ-ԲԳՏ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ
4. » ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

13 SEP 2013

5941

Պետհրատի տպարան
Գլավլիտ 7466 (բ)
Պատվեր № 1343
Տիրաժ 1000

Սրբագրեցին՝ Ա. Թովմասյան Ե. Հարությունյան

Հանձնված է արտադրության 19 ապրիլի 1932 թ.
Ստորագրված է տպելու 5 մայիսի 1932 թ.

# ԲԱՆԱՁԵՎ ՀԿ (Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(Ընդունված է միաձայն)

Համկոմկուսի (բ) Երքաղկազմակերպության 2-րդ կուս. կոնֆերանսը լսելով և քննության առնելով ընկ. Անանյանի զեկուցումը Հայկոմկուսի (բ) Կենտկոմի գործունեության մասին — ամբողջովին և անվերապահորեն հավանություն է տալիս ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քաղաքական գծին և կատարած գործնական աշխատանքներին:

Կոնֆերանսը մեծ գոհունակությամբ արձանագրում է, որ շնորհիվ կուսակցության լենինյան գլխավոր գծի անշեղ կենսագործման, Հայաստանի կուսկազմակերպությունը Հայկոմկուսի(բ) Կենտկոմի ղեկավարությամբ և գլխավորելով Հայաստանի բանվոր դասակարգի և կոլտնտեսական ու չքավոր-միջակային աշխատավորական լայն զանգվածների քաղաքական և արտադրական բուռն ակտիվությունը, ձեռք է բերել հսկայական նվաճումներ ժողովրդական տնտեսության բոլոր ճակատամասերում:

Ջախջախելով դասակարգային թշնամու՝ կուլակի և նրա իդեոլոգ-դաշնակցության բոլոր փորձերը կասեցնելու մեր հաղթարշավը, մերկացնելով և անխնա հարվածելով դասակարգային թշնամու գործակալությունը մեր շարքերում, ներկա էտապի գլխավոր վտանգ աջ օպորտունիզմը, նրա անմիջական զինակից «ձախ» օպորտունիզմը և նրանց նկատմամբ հաշտվողականությունը, ինչպես նաև հակահեղափոխական բոլոր գույնի իդեոլոգիաները, ծավալելով սոցիալիստական ծավալուն հարձակումն ամբողջ ֆրոնտով կապիտալիստական էլեմենտների դեմ, ստեղծելով բոլոր նախադրյալները մեզ մոտ ևս վերացնելու կուլակությունը որպես դասակարգ՝ համատարած կոլեկտիվացման բազայի վրա —Հայկոմկուսի (բ) Կենտկոմն ապահովեց մեր վիթխարի նվաճումները՝ մեր յերկիրը ինդուստրիալ-ագրարային յերկիր դարձնելու, գյուղի սոցիալիստական վերակառուցման, համատարած գրագիտության և ընդհանրապես կուլտուրական հեղափոխության բնագավառներում:

Կոնֆերանսը գոհունակությամբ է նշում այն հսկայական նվաճումները, որ ձեռք են բերել Հայաստանի կուս. կազմակերպությունները Հայկոմկուսի(բ) լենինյան բոլշևիկյան Կենտկոմի ղեկավարությամբ, Անդրկովկասի և Միության աշխատավորության յեղբայրական համերաշխության ամրացման միջոցով, Լենինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման հիման վրա, Անդրկովկասյան ֆեդերացիայի տնտեսական քաղաքական հիմքերի ամրապնդման բնագավառում:

Շնորհիվ Կենտկոմի վարած ճիշտ լենինյան գծի, հսկայական չափով աճեց արդյունաբերության արտադրանքը (27/28 թվի 110 միլիոն ռուբլու ընդհանուր արտադրանքի և անցյալ տարվա 161 միլ. ռուբ. արտադրանքի փոխարեն, 1931 թ. ժողտնտեսության ընդհանուր արտադրանքը հասավ 187 միլիոն ռուբլու, կամ աճեց 16,1%-ով՝ նախորդ

տարվա համեմատությամբ: Հնգամյակի նախորդ տարվա 28 միլիոն արտադրանքի փոխարեն՝ 31 թվին մեր սոցիալիստական արդյունաբերությունը տվեց 79 միլիոն ռուբլու արտադրանք, կամ աճեց 47,4%-ով: Հնգամյակի համաձայն 28—29 թվից մինչ 1933 թիվը նախատեսնված 363 միլ. ռուբլու արտադրանքի փոխարեն, այս տարվա 145 միլիոն ռուբլու հետ Հայաստանի ժողտնտեսության արտադրանքը 4 տարում կհասնի 330 միլիոն ռուբլու և այլն): Խոշոր չափով աճեց նաև կապիտալ ներդրումները (հնգամյա պլանով նախատեսված 5 տարվա ընթացքում ժողտնտեսության բոլոր բնագավառներում 268 միլիոն ռուբլի ներդրելու փոխարեն՝ այս տարվա 142 միլ. ռուբլու հետ միասին 4 տարում հիմնական ներդրումները կհասնեն 323 միլիոն ռուբ., հնգամյա պլանը գերակատարելով 29 %-ով: Արդյունաբերության գծով հիմնական ներդրումների 5-ամյա պլանը 3 ու 1 քառորդ տարում կատարվել է 79 տոկոսով, իսկ էլեկտրիֆիկացիայի գծով 112 տոկոսով): Հնգամյակի առաջին յերեք տարիների պլանները կատարվեցին և գերակատարվեցին ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում: Ավարտվեց սոցիալիստական էկոնոմիկայի ֆունդամենտի կառուցումը և ստեղծվեց բոլոր նախադրյալները՝ կատարելու և գերակատարելու 5-ամյակը չորս տարում:

Երքաղկազմակերպության 2-րդ կուս. կոնֆերանսը հատկապես ընդգծում է այն խոշոր նվաճումները, վոր ձեռք է բերել Հայաստանի կուսակցական կազմակերպությունը բանվոր դասակարգի և աշխատավորական լայն մասսաների նյութական և կուլտ-կենցաղային դրության բարելավման բնագավառում: Աճել է արդյունաբերական բանվորների թիվը (1928 թվի 922 հազար ազգաբնակության փոխարեն Հայաստանում ունենք ներկայումս մեկ միլիոն 40 հազար ազգաբնակություն, տարեկան աճումը 4 տոկ.: 1928 թվի 172,000-ի փոխարեն Հայաստանի քաղաքային ազգաբնակությունը կազմում է 220.000 մարդ՝ տարեկան աճում 10 տոկ.: Վարձու աշխատանքով զբաղվողների թիվը, չհաշված գյուղատնտեսական պրոլետարիատը, կազմում է 28-29 թվին 45.000 մարդ, 29-30 թվին՝ 60.000 մարդ, 31 թվին՝ 72.000 մարդ, տարեկան աճում՝ 20 տոկոսով): Բարձրացել է աշխատավարձը (անցյալ տարի աշխատավարձի միջին աճումը հասավ 18 տոկոսի, ցենզային արդյունաբերության մեկ բանվորի միջին ամսական աշխատավարձը 1930 թ. 67 ռուբլուց բարձրացավ 31 թ. 80 ռ., շինարարական բանվորինը՝ 94 ռուբլուց մինչև 113 ռ. և ժողլուսավորության գործում աշխատողինը՝ 65 ռուբլուց մինչև 91 ռուբլի): Անհամեմատ բարելավվել է բանվորական մատակարարման գործը:

Հայկոմկուսի (բ) Կենտկոմի բոլշևիկյան ղեկավարությամբ, Հայաստանի կուս. կազմակերպությունները կարողացան ձեռք բերել իրական, անվիճելի նվաճումներ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում:

Հայաստանի աշխատավորական տնտեսությունների 40 տոկոսի ընդգրկումը կոլեկտիվ տնտեսություններում, գյուղի սոցիալիստական վերակառուցման առաջավոր հատվածի 45 խորհ. տնտեսությունների կազմակերպումը, գյուղատնտեսական արտադրանքի զգալի աճումը և սոցիալիստական հատվածի արտադրանքի գերակշռումը, գյուղատնտեսության տեխնիկական բազայի ամրացումը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հզոր լծակների՝ մեքենատրակտորային կայանների կազմակերպումը, ինչպես նաև տեխնիկական կուլտուրաների մշակության և սոցիալիստական անասնաբուծության զարգացման բնագավառում ձեռք բերած հսկայական նվաճումներն անվիճելիորեն վկայում են Հայկոմկուսի (բ) Կենտկոմի վարած լենինյան ճիշտ գծի մասին:



Դրա հետ մեկ տեղ կոնֆերանսը նշում է այն լուրջ քաղաքական սխալները, վոր թույլ տվեցին Անդրյերկոմը և ազգային կուս. կենտկոմները գյուղացիական հարցում և վորոնց լրիվ ու բոլշևիկյան գնահատականը տվեց Համկոմկուսի (բ) Կենտկոմն իր հոկտեմբերի 31-ի պատմական վորոշումով՝ Անդրկովկասյան կուս. կազմակերպությունների զեկուցումների առթիվ:

Կոնֆերանսն ամբողջապես և անվերապահորեն հավանություն է տալիս Հայկոմկուսի (բ) Կենտկոմի ձեռնարկած միջոցառումներին և ծավալած աշխատանքներին՝ Համկոմկուսի (բ) Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումները Հայաստանում իրագործելու վերաբերյալ, և գտնում է, վոր այդ ձեռնարկումները լրիվին ապահովում են Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումների լրիվ կատարումը և թույլ տրված սխալների լիակատար վերացումը:

Արձանագրելով և դատապարտելով մի քանի շրջանների թույլ աշխատանքներն ու պայքարը կատարված սխալների վճռական ուղղման համար և «ձախ» սխալներն աջ ոպորտունիստական պրակտիկայով ուղղելու փաստերը, կոնֆերանսը պահանջում է բոլոր կուս. կազմակերպություններից՝ Համկոմկուսի (բ) Կենտկոմի և Հայկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումների ու դիրեկտիվների բոլշևիկյան հետևողականությամբ և անշեղ կիրառումով վճռականորեն և մինչև վերջ ուղղել թույլ տված սխալները, ծավալել բոլշևիկյան աշխատանք կոլխոզները տնտեսապես, քաղաքականապես և կազմակերպչորեն ամրապնդելու և կազմակերպված դիմավորելու բոլշևիկյան 3-րդ գարնանացանը:

Կոնֆերանսը հանձնարարում է Երկոմին՝ մշակել մի շարք կոնկրետ ձեռնարկումներ, էլ ավելի ուժեղացնելու քաղաքի և նրա կուս. կազմակերպության ոգնությունը գյուղին:

Կոնֆերանսը նշում է, այն խոշոր թերությունները, վորոնք դեռ ևս գոյություն ունեն Հայաստանի կուս. կազմակերպությունների աշխատանքներում (արդյունաբերության մի շարք կարևոր ճյուղերի հետ մնալը, բամբակի մշակության և բերքահավաքի պլանների թերակատարումը, անասնապահության զարգացման դեռ անբավարար վիճակը և այլն) և վորոնց անհապաղ վերացմանը պետք է ձեռնարկեն կուսակցական, խորհրդային, տնտեսական, պրոֆմիութենական, կոոպերատիվ և կոմյերիտական բոլոր կազմակերպությունները, անշեղ ղեկավարվելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի, Անդրյերկոմի և Հայկոմկուսի (բ) Կենտկոմի բոլշևիկյան դիրեկտիվներով:

Երկաթուղային տրանսպորտը դեռ ևս մնում է ժողովրդական տնտեսության նեղ տեղը: Տրանսպորտի արմատական վերակառուցումը ժողտնտեսության զարգացման վիթխարի տեմպերի համաձայն, հանդիսանում են Հայաստանի կուսակցական բոլոր կազմակերպությունների պատվի գործը: Զուգերթի արմատավորումը, տնտհաշվարկի կիրառումը, շոգեկառքերի և վագոնների պարկերի արմատական բարելավումը,—առաջնորդի վեց ցուցմունքների լրիվ կատարումը պետք է դառնան մեր հետագա աշխատանքների հիմքը:

Հայկոմկուսի (բ) 8-րդ համագումարի նախօրյակին, 5-ամյակի 4-րդ յեզրափակման տարվա շեմքին՝ Հայաստանի կուսակցական բոլոր կազմակերպություններն ընդհանուր հանրագումարի բերելով կատարած աշխատանքները, ամրապնդելով ձեռք բերված նվաճումները և ե՛լ ավելի ընդհուպ համախմբվելով բոլշևիկյան կենտկոմի շուրջը, 8-րդ համագումարի վորոշումները գործողության ծրագիր դարձնելով՝ կլծվեն սոցիալիստական շինարարության ավելի հոյակապ խնդիրների կենսագործմանը, կպայքարեն բոլշևիկյան ավելի բարձր տեմպերի համար:

Կոնֆերանսը նշում ե, վոր Հայաստանի կուսակցական բոլոր կազմակերպությունները պետք ե վճռականորեն ձեռնարկեն ընկ. Ստալինի վեց ցուցմունքների կիրառմանը, վերակառուցեն իրենց աշխատանքները մեր զարգացման շրջանի պայմանների և խնդիրների համեմատ, արմատավորեն տնտհաշվարկը, ծավալեն ու խորացնեն աշխատանքի սոցիալիստական բարձր ձևերն արդյունաբերության մեջ, տրանսպորտում, խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում, կուլտուրական ֆրոնտում և ապահովեն 1932 թվի բոլոր պլանային առաջադրանքների կատարումն ու գերակատարումը:

Հայաստանի կուսակցական կազմակերպություններն իրենց Լենինյան Կենտկոմի աննկուն ղեկավարությամբ, բոլշևիկյան կուռ միաձուլությամբ կշարունակեն ծավալել ավելի անհաշտ և անողոք պայքար կուսակցության գլխավոր գծի անշեղ կենսագործման համար, այդ գծից կատարվող բոլոր տեսակի շեղումների դեմ, ջախջախելով ներկա ետապի գլխավոր վտանգ հանդիսացող աջ թեքումը, «ձախ» ոպորտունիզմը, նրանց նկատմամբ ցուցաբերվող հաշտվողականությունը, հիմնովին արմատախիլ անելով ատամանշչինայի և անսկզբունք խմբակայնության ելեմենտները կուսակցության շարքերից:

Բարձրացնելով կուսակցության անդամների Մարքս-Լենինյան դաստիարակությունը, նրանց գաղափարական-քաղաքական մակարդակը ընկ. Ստալինի վերջին նամակի հիման վրա և բոլշևիկյան ինքնաքննադատության լայն ծավալմամբ սրել կուսակցական, բանվորական-աշխատավորական լայն մասսաների հեղափոխական-դասակարգային զգոնությունն ընդդեմ հակահեղափոխական ամեն գույնի իդեոլոգիաների, հակահեղափոխական դաշնակցության, տրոցկիստական կոնտրաբանդայի, փթած լիբերալիզմի, մեծապետական շովինիզմի, վորպես գլխավոր վտանգի, տեղական նացիոնալիզմի, հանուն կուսակցության Լենինյան գծի անաղարտության, հանուն կուս. շարքերի պողպատյա միասնականության, հանուն Անդրկովկասյան ֆեդերացիայի տնտեսական-քաղաքական հզորության ամրացման և բանվորական լայն զանգվածների ինտերնացիոնալ դաստիարակության, հանուն Համկոմկուսի (բ) Լենինյան շտաբ կենտկոմի և կուսակցության ու բանվոր դասակարգի առաջնորդ ընկ. Ստալինի ցուցմունքների լիակատար կենսագործման:

Կեցցե՛ սոցիալիստական հաղթարշավի կազմակերպիչն ու ղեկավար Համկոմկուսի (բ) Կենտկոմը.

Կեցցե՛ կուսակցության և միջազգային հեղափոխության ղեկավար ընկ. ՍՏԱԼԻՆԸ.

Կեցցե՛ բոլշևիկյան Անդրյերկոմը.

Կեցցե՛ Հայկոմկուսի (բ) Լենինյան շտաբ կենտկոմը:



# ԲԱՆԱՁԵՎ ՀԿ (Բ) Կ ՅԵՐՔԱՂԿՈՄԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(Ընդունված ե միաձայն)·

Յերևանի քաղաքային 2-րդ կուս. կոնֆերանսը լսելով և քննարկելով Յերկոմի հաշվետու զեկուցումը՝ ամբողջովին հավանություն ե տալիս Յերկոմի վարած քաղաքական գծին և տարած գործնական աշխատանքին:

Հիմք ունենալով կուս. 16-րդ համագումարի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հետագա պլենումների վորոշումները, ինչպես նաև կուս. բարձրագույն մարմինների դիրեկտիվները և ընկ. ՍՏԱԼԻՆԻ պատմական ցուցմունքները, Յերևանի Կոմիտեն, Անդրյերկրկոմի և Հայկոմկուսի (բ) կենտկոմի անմիջական ղեկավարությամբ, կազմակերպելով և գլխավորելով բանվորական և աշխատավորական մասսաների արտադրական-քաղաքական ակտիվությունը, հետևողականորեն կիրառելով կուսակցության գլխավոր գիծը և անողոք պայքար մղելով կուս. գլխավոր գծից կատարվող բոլոր տեսակի և գույնի շեղումների դեմ՝ իր աշխատանքների բոլոր բնագավառներում ձեռք ե բերել զգալի նվաճումներ ու հաջողություններ:

Յերևանի պրոլետարիատը՝ կուս. կազմակերպության ղեկավարությամբ, կոմյերիտմիության և արհմիութենական կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ՝ հիմնականում իրականացրեց «առանց պարտքի թևակոխել 4-րդ յեզրափակման տարին» լոզունգը: 1931 թվին ամբողջ արդյունաբերության գծով (ներառյալ նաև Քաղխորհրդի և արդյունաբերական կոոպերացիայի ձեռնարկությունները) 47·599·228 ռուբլու արտադրանքի փոխարեն՝ փաստորեն արտադրվել ե (26-27 թ. ամփոփոխ գներով) 47·987·862 ռ. արտադրանք կամ վճռական տարվա պլանները կատարվեց 100,8 տոկոսով:

Զգալի և իրական են հաջողությունները յերկաթուղային տրանսպորտի աշխատանքներում ու քաղաքային տնտեսության վերակառուցման բնագավառում:

Վճռական տարվա արդֆինպլանների կատարման ասպարեզում ձեռք բերված հաջողությունները հնարավորություն են տալիս 1932 թվի համար վերցնել աճման ավելի բարձր տեմպեր՝ այսպես որինակ՝ ցենզային արդյունաբերության միայն 13 ձեռնարկություններում 1932 թվին կոնտրոլ թվերով ընդհանուր արտադրանքը 1931 թվի դիմաց աճելու յե 70 տոկոսով:

Այդ փաստերն ավելորդ անգամ ապացուցում են վերցրած տեմպերի, կուսակցության հիմնական գծի ճիշտ լինելը և հիմնովին ջախջախում ոպորտունիստների, թերահավատների բոլոր տեսակի բարբաջանքները:

Լայն ծավալ են ստացել աշխատանքի սոցիալիստական ձևերը, սոցմրցումն ու հարվածայնությունը: 1930 թ. 1066 հարվածայինների դիմաց 1931 թ. կան 5·506 հարվածայիններ: Արմատավորվում են աշխատանքի սոցիալիստական ավելի բարձր ձևերը՝ տնտհաշվարկային բրիգադները, հերթափոխ հանդիպական պլանները և այլն:

Այս բոլորն ապացուցում են բանվոր դասակարգի արտադրական-

քաղաքական ակտիվության բարձրացումը, նրա լայն զանգվածների ծավալում պայքարը կուսակցության գլխավոր գծի կիրառման համար։

Ժողովրդական տնտեսության բուռն զարգացման հետևանքով և նրան զուգընթաց՝ զգալիորեն աճել է բանվորների աշխատավարձը, համեմատաբար լավացել է բան. մատակարարումը, բարձրացել է բանվորների նյութական և կենցաղային դրությունը։ Պլաններով նախատեսված բանվորների ամսական միջին աշխատավարձի բարձրացումը փաստորեն կատարվել է՝ Մեխ. գործարանում—108 տոկ., Կարբիդում—106,2 տոկ., Փայտամշակման գործարանում—117,2 տոկ., Ծխախոտի գործարանում—121,8 տոկ., Կարի գործարանում—109,5 տոկ.։ 1932 թվին Երևանի ցենզային արդյունաբերության կոնտրոլ թվերով բանվորների աշխատավարձը պետք է բարձրանա 11 տոկոսով։ 1930 թ. չորս ճաշարանի դիմաց ներկայումս գործում են 39 ճաշարան (որից 26-ը գործարանային և շինարարական), որոնք ընդգրկում են 32,000 հոգի։ Գործում են 224 խանութ և առևտրական կետեր։

Երևանի պրոլետարիատը ձեռք է բերել անվիճելի նվաճումներ նաև կուլտուրական հեղափոխության և մասնավորապես ժողովրդական կրթության ասպարեզում։ 8–15 տարեկան հասակի բոլոր երեխաները (10.266 հ.) և մեծահասակ անգրագետ և կիսագրագետներից 14.646 հ. ընդգրկված են համապատասխան դպրոցական ցանցում։ Եթե 1930 թ. Լուսբաժնի ամբողջ ցանցում սովորում էին 16.436 հոգի, 1931–32 թվին սովորում են 28.395 հոգի։ Այսպիսով 1932 թվին Երևան քաղաքը դառնում է համատարած գրագիտության քաղաք։

Հաշվետու ժամանակաշրջանում զգալիորեն աճել է Երևանի կուս. կազմակերպությունը (2.896-ից հասել է 4.140 հ.) բարելավվել է նրա սոցիալական կազմը։ (57,6 տոկոսի դիմաց, բանվորները ներկայումս կազմում են 68,5 տոկ.)։ Կուս. կազմակերպության հետ աճել է նաև կոմերիտմիությունը, որը ներկայումս ընդգրկում է իր շարքերում 10.024 հոգի։

Կոնֆերենցիան արձանագրում է, որ Երևանի կուս. կազմակերպությունը Հայկոմկուսի (բ) Կենտկոմի և Երկոմի լենինյան ղեկավարությամբ հետևողականորեն կիրառել է կուսակցության գլխավոր գիծը, ծավալել է անողոք պայքար այդ գծից կատարվող բոլոր տեսակի շեղումների, ինչպես նաև դասակարգային թշնամու, նրա ագենտության ու ոտնձգությունների դեմ։

Երևանի կուս. կազմակերպությունը մահացու հարվածներ հասցնելով ներկա շրջանի գլխավոր վտանգ աջ թեքման «ձախ» օպորտունիզմին, Սիրցով-Լոմինաձեյի բլոկին, հակահեղափոխական տրոցկիստական-մենշևիկյան թափթփուկներին, հայկական բուրժուազիայի ֆաշիստական կուսակցության՝ Դաշնակցությանը, ազգային հարցում գլխավոր վտանգ հանդիսացող մեծապետական շովինիզմին, ինչպես և տեղական նացիոնալիզմին, հիմնականում ջախջախելով անսկզբունք խմբակային պայքարը, ավելի է ամրացրել կազմակերպության իդեական-քաղաքական բոլշևիկյան միաձուլությունը և ավելի սրել նրա բոլշևիկյան աչալրջությունն ու զգոնությունը։

Կոնֆերենցիան արձանագրում է, որ Երևանի արդյունաբերության հիմնական 3 գործարանները հնգամյակի 4-րդ եզրափակիչ տարին դիմավորեցին զգալի ճեղքվածքներով, թերակատարելով իրենց վճռա-



կան տարվա արդֆինպլանները (Կարբիդը կատարել է 88,0, Կոնսերվը՝ 79,8 և Մեխանիկականը՝ 64 տոկ.)։ Մենք դեռևս շատ հետ ենք մնում ինքնարժեքի իջեցման, իսկ որոշ օղակներում (Արարատ, Ծխախոտի, Մեխանիկական, Կաշու, Կարբիդի, Փայտամշակման գործարաններ և այլն), աշխատանքի արտադրողականության և արտադրանքի որակի բարձրացման ասպարեզներում մի հանգամանք, որը զգալիորեն հարվածում է պլանների կատարմանը և իջեցնում նրանց որակական ցուցանիշները։

Մենք տակավին շատ հետ ենք մնում շինարարության բնագավառում։ Վճռական տարվա պլանները Հայպետշինի կողմից կատարված են 40 տոկոսով, Հայբնակկոոպմիության կողմից՝ 70 տոկ., կոմունալ շինարարությունը՝ 52,2 տոկ.։ Ղեբը՝ առաջին յեռամսյակում 28 տոկ., յերկրորդում՝ 25,3 տոկ. և 3-ում՝ 16 տոկ.։ Քանաքեռգեսը՝ հողային աշխատանքները կատարել է 46,8 տոկ., բետոնային աշխատանքները՝ 14 տոկ., իսկ ժամանակավոր կառուցումները՝ 42,2 տոկ.։

Դեռ զգալի ճեղքվածքներ կան Երկաթուղային տրանսպորտում. հիվանդ շոգեկառքերի թիվը հասնում է 35 տոկ., նկատվում են գնացքերթի վթարման և կրկնակի նորոգման հաճախակի դեպքեր, անբավարար է վագոնների շրջանառությունը. չի կարգավորված դիսպետչերների աշխատանքները։

Բանմատակարարման, կոոպերացիայի և խորհրդային առևտրի ասպարեզներում մենք դեռևս ունենք աչքի զարնող բացեր և մեծ պակասություններ։ Առանձնապես հետ ենք մնում որակական ցուցանիշների և առաջին հերթին Երսնունդտրեստի գծով։ Կոոպերացիայի և խորհրդային առևտրի ասպարեզից դեռ վերջնականապես արմատախիլ չի արված նեպմանական-առևտրական ոգին, անբավարար է կատարվում Համ-Կոմկուսի (բ) Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի, Հայկոմկուսի (բ) Կենտկոմի և Երկոմի որոշումները՝ բան. մատակարարման, հասարակական սննդի, կոոպերացիայի և խորհրդային առևտրի ծավալման և որակի բարձրացման ուղղությամբ։

Կոնֆերանսն առանձնապես նշում է, որ առաջնորդի պատմական 6 ցուցմունքները, ինչպես նաև Համկոմկուսի (բ) Կենտկոմի հոկտեմբերի 31-ի որոշումը դեռ ևս ամենուրեք չեն դարձել բոլշևիկյան աշխատանքի ծավալուն գործողության ծրագիր։ Ինքնահոսը և օպորտունիստական պրակտիկան մեր աշխատանքների և կազմակերպությունների մի շարք օղակներում դեռ լրիվ չափով չեն հաղթահարված։

Կոնֆերանսն ընդգծելով 1932 թվի հսկա նախատեսումները, նրանց վճռող կարևորագույն նշանակությունը մեր յերկիրը ինդուստրիալ-ագրարային յերկիր դարձնելու գործում և 1932 թվի կոնտրոլ թվերի լրիվ կատարումն ու գերակատարումն ապահովելու համար որոշում է՝

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Հենվելով Երևանի գործարանների և շինարարության բանվորների որոշումների վրա՝ առաջին հնգամյակը և 4-րդ յեզրափակման տարվա պլանները կատարել ժամկետից շուտ՝ պրոլետարական հեղափոխության 15-րդ տարեդարձին։

Հանձնարարել Յերկոմին՝ գործարանների և շինարարությունների յեռանկյունների հետ միասին վերակազմել 1932 թվի արդֆինպլանները, խտացնելով այդ պլանները 10 ամսում և սահմանել հատուկ հսկողություն ամսական և յեռամսյա պլանների կատարման և գերակատարման վրա. այն հաշվով, վորպեսզի ապահովված լինի հնգամյակի կատարումը 32 թվի նոյեմբերի 7-ին:

2. Հնգամյակի 4-րդ, յեզրափակման տարում՝ հանուն կուսակցության գլխավոր գծի, կառուցել, աշխատել և պայքարել «բոլշևիկյան տեմպը բազմապատկած վորակով» լոզունգով:

3. Գիտակցելով, վոր «աշխատանքի արտադրողականությունը վերջին հաշվով ամենակարևորը, ամենագլխավորն է նոր հասարակության, նոր հասարակարգի հաղթանակի համար», վոր «կոմունիզմը սկսվում է այնտեղ, ուր հանդես է գալիս շարքային բանվորների ծանր աշխատանքը, հաղթահարող, անձնազոհ հոգատարություն աշխատանքի արտադրողականության բարձրացման, ամեն մի փութ հացի, ածուխի, յերկաթի և այլ առարկաների պահպանության համար» (ԼԵՆԻՆ), կոնֆերանսն անհրաժեշտ է համարում՝

ա) Ավելի լայն ծավալել սոցմրցումը, հարվածայնությունը և նրա բարձր ձևերը՝ տնտհաշվարկային բրիգադներ, հերթափոխ հանդիպական պլաններ, հարվածային բրիգադներ, ցեխեր, գործարաններ, արտադրական կոմունաներ և այլն: Լավ հիմքերի վրա դնել սոցմրցման, հարվածայնության և նրա արդյունքների հաշվառումը և փորձի փոխանակումը, ինչպես նաև պայքարը կեղծ հարվածայինների դեմ:

Կոնֆերանսն առանձնապես կազմակերպության ուշադրությունն է հրավիրում կոմունիստներին և կոմյերիտականներին գլխովին հարվածայնության մեջ ընդգրկելու խնդրի վրա:

բ) Իրական և գործնական պայքար մղել իջեցնելու համար արտադրանքի ինքնարժեքը, սիստեմատիկորեն բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը և արտադրանքի վորակը:

գ) Վճռական պայքար մղել և կոնկրետ աշխատանքների միջոցով մինիմումի հասցնել պրոգուլները և պարապուրդները, կուլտ-քաղաքական և ագիտ-բացատրական աշխատանքների միջոցով իսպառ վերացնել հոսունությունը, ուժեղացնել ինքնաամրացման աշխատանքները՝ ձեռնարկելով բանվորների կուլտ-կենցաղային պայմանների բարելավման ել ավելի նպաստավոր միջոցառումներ:

4. Յերևանի ձեռնարկներում կատարված ռացիոնալիզատորական աշխատանքները համարելով միանգամայն անբավարար, կոնֆերենցիան անհրաժեշտ է համարում՝ ապահովել արտադրական պրոցեսների ռացիոնալացման գործը, կյանքի կոչել ռաց. և գյուտ. բջիջներին, ապահովելով նրանց աշխատանքների վրա անհրաժեշտ ղեկավարություն և օժանդակություն, նպատակ ունենալով ամբողջովին և ժամանակից շուտ կենսագործելու 1932 թ. ռաց. պլանները:

5. Անհրաժեշտ է ուժեղացնել ձեռնարկությունների կոնյունկտուր աշխատանքները, վերակազմել այն՝ վերից վար և դարձնել արդֆինպլանների կատարման գործում նկատվող թերությունների և այս կամ այն բնագավառի պլանների թերակատարման իրական պատճառները հայտնաբերող գործնական մարմիններ, ընկ. Ստալինի վեց ցուցմունք-



ների լրիվ կենսագործման ճանապարհով ստեղծել պայմաններ այդ թերությունները վերացնելու համար:

6. Արձանագրելով, վոր դիմազրկության վերացումը Յերևանի գործարաններում դեռ ևս հեռու են բավարար լինելուց, կոնֆերենցիան հանձնարարում է Յերկոմին և կուսակցական կազմակերպությանը՝ 32 թ. առաջին կվարտալի ընթացքում հիմնականում հաղթահարել դիմազրկությունը, ուժեղացնել պատասխանատվության զգացմունքը աշխատավորների մեջ և սահմանել ոպերատիվ ու առօրյա խիստ հսկողություն վորոշումների կենսագործման վրա:

7. Բոլոր ձեռնարկների ցեխերը 32 թ. հունվարի 1-ից տնտ. հաշվարկի փոխանցելու առթիվ ԽՍՀՄ ԺՏԳԽ-ի և ՀԱՄԿԽ-ի հրամանի կենսագործումը Յերևանի ձեռնարկներում անբավարար համարելով՝ կոնֆերանսն առաջարկում է Յերկոմին՝ ձեռք առնել ամենակտրուկ միջոցները, բոլոր գործարանների և ձեռնարկների ցեխերը փոխադրելու տնտ. հաշվարկի, կարգավորելով նրանց հաշվետվության և հաշվեառման աշխատանքները:

8. Ճարտարապետ-տեխնիկական ուժերին հասարակական աշխատանքների մեջ ներգրավելու աշխատանքները համարելով դեռևս անբավարար, կոնֆերենցիան հանձնարարում է Յերկոմին՝ ՀԱՄԽ-ի ՃՏՄՄ-ի հետ միասին մշակել կոնկրետ միջոցներ՝ ուժեղացնելու մասնագիտական ուժերի մասնակցությունն արտադրական խորհրդակցությունների ռաց. և գյուտ բջիջների ու այլ հասարակական աշխատանքներին:

9. Կոնֆերանսը հանձնարարում է Յերկոմին՝ յելնելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. դեկտեմբերի 22-ի վորոշումից, մշակել աշխատանքի կոնկրետ ծրագիր, ապահովելու ինչպես վորոշված ժամկետին քաղաքի կիսավարտ շենքերի ավարտումը, այնպես ել 32 թ. համար նախատեսված բոլոր շինարարությունների պլանների լրիվ կատարումը:

10. Արձանագրել, վոր դեռ թույլ է ընթանում տեխնիկական պրոպագանդայի աշխատանքները, առաջարկել Նորընտիր քաղկոմին՝ լայն ծավալել տեխնիկան ուսումնասիրող խմբակների ցանցը, լոզունգ ընդունելով, «վոչ մի գործարան, արտադրական ձեռնարկ կամ հիմնարկ առանց տեխնիկան ուսումնասիրող խմբակի»:

11. Առաջարկել քաղկոմին՝ հատուկ հսկողության տակ վերցնել Յերկաթուղային տրանսպորտի վերակառուցման աշխատանքների ուժեղացումը, վճռականորեն կրճատել հիվանդ շոգեմեքենաների տոկոսը, հասցնելով այն սահմանված նորմային: Վագոնների պարապուրդների վերացման և տնտհաշվարկի լրիվ արմատավորման խնդիրների վրա դարձնել հատուկ ուշադրություն:

12. Կոնֆերանսը հանձնարարում է քաղկոմին՝ հատուկ ուշադրություն դարձնել ժողովրդական կապի աշխատանքների վրա և մի շարք գործնական միջոցներ ձեռք առնել կապի ապարատի բարելավման և կապի աշխատանքների ուժեղացման գծով:

## ԲԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

**Յելնելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի վորոշումներից՝ կուսակցության քաղաքային 2-րդ կոնֆերենցիան վորոշում է՝**

1. Լայնացնել մանրածախ խանութների ցանցը Հայկոոպի, Հայսառի, Մատժողկոմատի և Հողժողկոմատի գծով: Այդ լայնացումը կատարել այն հաշվով, վոր գների խորհրդային քաղաքականության հիման վրա լայն չափով ռեալիզացիայի յենթարկվի առևտրակոոպ. մարմինների, արդյունաբերական կոոպերացիայի և կոլխոզների ապրանքային արտադրանքը:

2. Առաջարկել Նորընտիր Բաղկոմին՝ մեկ ամսվա ընթացքում առևտրակոոպմարմինների հետ մշակել կոնկրետ միջոցառումներ քաղաքում ապրանքային ֆոնդերի լրացուցիչ աղբյուրներ գտնելու և քաղաքի համար համապատասխան ապրանքային ֆոնդ առանձնացնելու, մանավորապես ապակենտրոնացված մթերումներ կազմակերպելու վերաբերյալ: Այդ տեսակետից հատուկ ուշադրություն դարձնել տնայնագործական արդյունաբերության զարգացման վրա:

3. Վճռականորեն հաղթահարել առևտրակոոպ. մարմինների գործնեյության պրակտիկայում յեղած գների քաղաքականության խախտումները և մանր բուրժուական-նեպմանական տենդենցները: Սահմանված նորմաներից գների բարձրացման ամեն մի յերևույթը դիտել վորպես գների խորհրդային քաղաքականության գիտակցական խեղաթյուրում և կոնկրետ մեղավորներին կանչել կուսակցական և դատական պատասխանատվության:

4. Առաջարկել Մատժողկոմատին, մեկ ամսվա ընթացքում լուծելու ուսանողությանը պլանային մատակարարման մեջ անցկացնելու խնդիրը և լրացուցիչ ապրանքային ֆոնդերի միջոցով նորմալ հունի մեջ դնել շինբանվորության և ուսանողության մատակարարումը: Միաժամանակ քննության յենթարկել ուսանողության համար առանձին կոոպերացիայի կազմակերպման խնդիրը:

5. Բաղ. ԲԳՏ-ի և ՀԱՄԽ-ի հետ անցկացնել առևտրակոոպ. մարմինների ցանցի և ապարատի ուսումնասիրություն՝ բյուրոկրատիզմի հաղթահարման, բանվորական նորմաները ժամանակին և ճկուն կերպով բանվորներին հասցնելու և շտատների կարգավորման տեսանկյունով:

6. Մատակարարման մարմիններին, գործարանների դիրեկցիաներին, գերատեսչություններին և Բաղկոմին՝ ձեռնարկել ամենակտրուկ միջոցներ վճռական պայքար կազմակերպելու արտադրանքի վորակի բարձրացման համար. կոնկրետ-օպերատիվ հսկողություն սահմանել վորակի բարձրացման հարցերի վրա և անցկացնել վատորակ արտադրանքի բրակերաժի սիստեմը:

7. Մատժողկոմատին, Հայսննդտրեստին, Յերսննդտրեստին և Յեր. քաղկոմին՝ յելնելով ժողսննդի զարգացման և նրա պահանջների ընդարձակման անհրաժեշտություններից՝ մինչև հոկտեմբեր ամիսը Յերևանում կառուցել մեկ գործարան-խոհանոց և մեկ մեխանիզացիայի յենթարկված ճաշարան:

8. Մատժողկոմատին և Բաղկոմին՝ բարձր աստիճանի հասցնել Յերսննդտրեստի աշխատանքները: Համապատասխան մարմինների միջոցով նրան հատկացնել ինքնուրույն մթերումներ կազմակերպելու առանձին ռայոն: Յերսննդտրեստին և առանձին ճաշարաններին կից կազմակերպել պահեստի միավորներ (խոզաբուծական, ճագարաբուծական, թռչնաբուծական) և վճռական միջոցառումներով կարգավորել ճաշի վորակը:



9. Յելնելով Յերսննդտրեստի ցանցի համար կադրերի պատրաստման անհրաժեշտությունից, առնվազն փետրվար ամսից Յերևանում բանալ հանրային սննդի տեխնիկում:

10. Հայկոոպին, Մատժողկոմատին և Առևտրակոոպ. մյուս մարմիններին՝ պլանավորման յենթարկել և հատկապես 32 թ. ընդարձակել կադրերի պատրաստման համար հատուկ նախատեսումները:

11. Հաշվի առնելով մերձքաղաքային տնտեսությունների խոշոր դերը բանվորական մատակարարման և հասարակական սննդի կազմակերպման ուղղությամբ՝ առաջարկել Նորընտիր Բաղկոմին և Հայկոոպին՝ այժմյանից ձեռնարկել բանջարաբուծական և անասնապահական մերձ-քաղաքային խորհ. տնտեսությունների ընդարձակման և այգեգործական մերձ. քաղաքային նոր խորհ. տնտեսություն կազմակերպելու գործին:

12. ՀԱՄԽ-ին՝ գործարաններում, շինարարության վրա, տրանսպորտում և արտադրական ձեռնարկներում բանվորական մշտական բրիգադների միջոցով կազմակերպել բանվորական մասսայի իրական վերահսկողությունը կոոպերացիայի բոլոր ողակներում, բան. մատակարարման և հասարակական սննդի ուղղությամբ:

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ապահովել 32 թվի ընթացքում դպրոցական շինարարության պլանը: Մինչև 32 թ. սեպտեմբերը ավարտել 6 նոր դպրոցական շենք՝ 7 ամյակների համար, 2 մանկապարտեզի շենք, 1 բնակելի տուն ուսուցչության համար, մեկ պոլիտեխնիկական խոշոր արհեստանոց և 1 պիոներատուն՝ իր թատրոնական սրահով:

2. Լուսժողկոմատի և պետհրատի միջոցով ամենակարճ ժամանակամիջոցում (մինչև փետրվարի 1-ը) ավարտել դասագրքերի և ծրագրերի մշակման և հրատարակման գործը, ապահովելով դպրոցները դասագրքերով ու ծրագրերով: Հատուկ ուշադրություն դարձնել ծրագրերն ու դասագրքերը Մարքս-Լենինյան մեթոդոլոգիայով ապահովելու խնդրի վրա:

3. Պարտավորեցնել Լուսբաժնին վերակազմել դպրոցական կյանքը և աշխինքնավարության որգաններն ըստ Համկոմկուսի (բ) Կենտկոմի սեպտեմբերի 5-ի վորոշման: Լայն կերպով ներգրավել դպրոցի աշխատանքներին ծնողներին և պրոլետարական հասարակայնությանը: Պարտավորեցնել ԼԿՅԵՄ Բաղկոմին՝ կազմակերպել դպրոցական ԼԿՅԵՄ բջիջներ դպրոցներին կից և վոչ այն գործարաններում, վորոնց կցված են դպրոցները պոլիտեխնիզացիայի գծով:

4. Պոլիտեխնիկ կրթության ապահովման գործում Լուսբաժնի հիմնական խնդիրը դարձնել տնտեսականի և գործնականի կապի հարցը: Պարտավորեցնել գործարանների յեռանկյունիներին և հատկապես կուս. բջիջներին՝ իրագործելու Համկոմկուսի (բ) Կենտկոմի սեպտեմբերի 5-ի վորոշումը՝ պոլիտեխնիզացիայի գործին հատուկ ինժեներո-տեխնիկական կադրեր տրամադրելու մասին:

5. Արձանագրելով Լուսցանցում կոմունիստ կադրերի խիստ պակա-

թը, անհրաժեշտ գտնել մոտիկ ապագայում ուժեղացնել կուս. ցանցը վորակյալ, կայուն կոմունիստների և կոմյերիտականների կադրերով:

6. Միությունների և տնտեսական ձեռնարկների միջոցով ապահովել նոր բացված գիշերային 7-ամյակների նյութական, ֆինանսական բազան:

7. ՀԱՄԽ-ի, Լուսաշխի և Լուսժողկոմատի միջոցով ամենաշտապ կարգով վերացնել լուս. աշխատավորների աշխատավարձի և ուսանողության թոշակների բաշխման «ձախ» հավասարեցման պրակտիկան:

8. Կոնֆերանսն արձանագրելով զգալի նվաճումներ պրոլետարական արվեստի և գրականության ասպարեզներում, ընդգծում է, վոր արվեստը և գրականությունը դեռ հետ են մնում մեր զարգացման ընդհանուր տեմպերից, դեռ հեռու յեն տալու մեր պայքարի ու շինարարության «մագնիտոգորսկներ»:

Արվեստի և գրականության վորոշ ոդակներում, ինչպես նաև այդ ֆրոնտում աշխատողների մի մասում տարբեր ձևերով և պրիզմներով իրեն զգալ է տալիս մանր բուրժուական և բուրժուական իդեոլոգիայի ազդեցությունը:

Արվեստի և գրականության ասպարեզում աշխատող հիմնարկությունները վճռականապես դեռ չեն վերակառուցել իրենց աշխատանքները՝ համաձայն սոցիալիստական վերակառուցման շրջանի ներկա պահանջներին:

Յելնելով վերոհիշյալից և արվեստի ու գրականության հսկայական դերից մեր պայքարի ու շինարարության գործում, կոնֆերանսը պահանջում է վճռականորեն վերակառուցել արվեստի և գրականության ասպարեզում աշխատող բոլոր կազմակերպությունների աշխատանքները սոցիալիստական աշխատանքի նոր ձևերի արմատավորման, տեմպի և առանձնապես վորակի տեսակետից: Արվեստի և գրականության կազմակերպությունները ծավալելով բոլշևիկյան պայքար յերկու ֆրոնտում, մանր-բուրժուական և բուրժուական գաղափարախոսությունների բոլոր տեսակի ու գույնի ազդեցությունների դեմ՝ պետք է կռվեն արվեստի և գրականության «մագնիտոգորսկների» համար, նոր աստիճանի վրա դնելու արվեստի և գրականության բոլոր ճյուղերի աշխատանքները, կուսակցականացնելով այն:

Մասնավորապես ընդգծելով կինոյի խոշոր նշանակությունը, կոնֆերանսը հանձնարարում է Յերկոմին՝ հատուկ հոգատարության տակ վերցնել կինո-արդյունաբերությունը և նրա արտադրանքի վորակը: 1932 թ. ընթացքում սկսել և անպայման ավարտել կինո-թատրոնի նոր շենքի կառուցումը Յերևանում:

Կոնֆերանսը հանձնարարում է Յերկոմին՝ մշակելու հատուկ միջոցառումներ ավելի աշխուժացնելու և լավացնելու արվեստի և գրականության կազմակերպությունների աշխատանքները Յերևանում:

9. Կտրուկ միջոցների դիմել քաղաքի սանիտարական և պրոֆիլակտիկական գործն իր բարձրության վրա դնելու վրա, հատուկ ուշադրություն դարձնել հատկապես ուսանողության և աշակերտության առողջապահական պայմանների բարելավման վրա:

10. Բանվորական նոր կադրերի պատրաստման ասպարեզում պարտավորեցնել բոլոր տնտեսական հիմնարկներին ըստ ամենայնի ապահովել ֆաբգործուսների, գործարանային 7-ամյակները և նման տիպի դպրոցական հիմնարկները շենքերով, դասատուական կազմով և նյութական բազայով: Բանֆակներում, տեխնիկումներում և ԲՈՒՀ-երում ապահովել հասարակագիտական առարկաների դասավանդությունը մարքս-լենինյան տեսությամբ զինված բոլշևիկ ընկերներով:

11. Ուժեղացնել և կոնկրետացնել բջիջների ղեկավարությունը հասարակական կազմակերպությունների աշխատանքների վրա: Բջիջների և բյուրոների նիստերում պարբերաբար լսել հասարակական կազմակերպությունների զեկուցումները և տալ կոնկրետ առաջադրություններ: Ապահովել կոմունիստների մասնակցությունը հասարակական կազմակերպությունների աշխատանքներին: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել Պաշր-Ավիաքիմի աշխատանքների վրա, վորպես բանվորական-աշխատավորական լայն զանգվածների ռազմականացման և յերկրի պաշտպանունակության ամրացման կարևոր ոդակի:

## ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆ

1. Կոնֆերանսը հանձնարարում է ԼԿՅԵՄ Յերքաղ. կազմակերպությանն ավելի խորացնել և վորակական բարձր մակարդակի հասցնել կոմյերիտմիության տնտեսական ֆրոնտի հաջողությունները, իրականացնելով կոմյերիտմիության 100% սոցմրցման և հարվածայնության մեջ ներգրավելու գործը, ուժեղացնել կոմյերիտմիության մասնակցությունը ռացիոնալիզացիայի, գյուտարարության արտադրական պրոպագանդայի և տեխնիկայի տիրապետման խնդիրներում:

Կոմյերիտմիության խնդիրն է մոբիլիզացիայի յենթարկել կազմակերպության և նրա գլխավորած արտամիութենական յերիտասարդության վողջ ուժերը՝ աշխատանքի սոցիալիստական ձևերի ծավալման և զարգացման հիման վրա, Յերևանի արդյունաբերական ձեռնարկների 5-ամյակը Հոկտեմբերյան Հեղափոխության 15-րդ տարեդարձին ավարտելու համար:

2. ԼԿՅԵՄ քաղկազմակերպության քանակական աճումն առանձին տեղերում հետ է մնում վորակից: Այդ դրությունն իր ամբողջ հասակով դնում է նորեկների մեջ տարվող քաղաքական դաստիարակչական աշխատանքների ուժեղացման խնդիրը, նրանց կոմյերիտականությունը վորակապես ամրացնելու տեսակետից: Կոնֆերանսը ՀամԼԿՅԵՄ պլենումում ընկ. Պոստիշևի առաջադրած խնդիրների հիման վրա հանձնարարում է ԼԿՅԵՄ կազմակերպության և կուսակցական բոլոր ոդակներին՝ ուշադրության կենտրոնում առնել կոմյերիտմիության մարքս-լենինյան դաստիարակության գործի դրվածքն առանձնապես նորեկների գծով, այն հաշվով, վորպեսզի այս տարվա քաղ. ուսուցման սիստեմում ապահովի առաջին հերթին նորեկների ընդգրկումը 100%-ով: Յերկոմի վերջին վորոշումների հիման վրա ապահովել կուսակցական ամենօրյա հոգատար վերաբերմունքը և գործնական օժանդակությունը ԼԿՅԵՄ բջիջներին՝ ստեղծելու բոլոր նախապայմանները կոմյերիտական քաղ. ցանցի կազմակերպման գործը և նրա դրվածքն ավելի կանոնավորելու համար:

3. Կոնֆերանսը հանձնարարում է կուս. քաղկազմակերպության

բոլոր բջիջներին ապահովել ամենօրյա կոնկրետ ղեկավարությունը ԼԿՅԵՄ կազմակերպության նկատմամբ, արմատապես վերակառուցելով ղեկավարության ձևերը կոլեկտիվ սկզբունքի հիման վրա՝ ըստ աշխատանքի նոր ձևերի և կոմյերիտմիության նոր պահանջների: Կոնֆերանսը նախազգուշացնում է կուսակցական բոլոր բջիջներին, վոր կուսակցական ղեկավարության ընդունակությունը կուսակցական բջիջի համար չափվելու յե տվյալ ԼԿՅԵՄ բջիջի աշխատանքով, նրա քանակական և վորակական ցուցանիշներով:

4. Կոնֆերանսն առաջարկում է Բաղկոմին՝ ԼԿՅԵՄ Բաղկոմի և կոմբջիջների միջոցով աշխուժացման յենթարկել պիոներ կազմակերպության աշխատանքները մասնավորապես նրա աճման գործում գոյություն ունեցող թերությունները արմատապես վերացնելու և կուսակցական առանձին օղակներում պիոներ աշխատանքների թերագնահատման ոպորտունիստական տրամադրությունների դեմ, վճռական պայքար մղելու տեսակետից: Կուսակցական առօրյա ղեկավարությամբ, պրոֆ. կազմակերպությունների և տնտեսական մարմինների ամենօրյա օժանդակությամբ, ինչպես նաև կոմյերիտմիության անմիջական օգնությամբ լայն հնարավորություններ ստեղծել ապահովելու պիոներ կազմակերպության աճման, նրա աշխատանքների վերակառուցման և կոմունիստական դաստիարակության խնդիրներում իրական և արմատական բեկում առաջ բերելու համար:

5. Իդեոլոգիական պայքարի բնագավառում կոմյերիտմիության խնդիրն է ավելի բարձրացնել կազմակերպության դասակարգային զգոնությունը, դասակարգային թշնամու և նրա ագենտուրայի յուրաքանչյուր վոտնձգության դեմ: Պայքարը դաշնակ. և դաշյերիտմիության դեմ պետք է հանդիսանա կոմյերիտկազմակերպության իդեոլոգիական պայքարի հիմնական ճակատամասերից մեկը: Կոնֆերանսը պահանջում է ԼԿՅԵՄ կազմակերպությունից ավելի ծավալուն, ավելի անհաշտ և անողոք դարձնել իր պայքարը ներկա շրջանի գլխավոր վտանգ աջ թեքման «ձախ» խոտորումների, հաշտվողականության և հակալենինյան բոլոր տեսակի շեղումների, կոնկրետ արտահայտությունների ու նրանց կրողների դեմ: Կոմյերիտմիության ինտերնացիոնալ դաստիարակության հիմունքներով ուժեղացնել պայքարը ազգային թեքումների՝ մեծապետական շովինիզմի, վորպես գլխավոր վտանգի և տեղական նացիոնալիզմի դեմ, կանոնավորելով և բարձրացնելով ազգային փոքրամասնությունների մեջ տարվող մասսայական-դաստիարակչական-կազմակերպչական աշխատանքների վորակը:

Չնայած ձեռք բերված վորոշ հաջողություններին, կոնֆերանսն արձանագրում է ազգային փոքրամասնությունների մեջ տարվելիք աշխատանքների դեռ անբավարար լինելը: Կոնֆերանսը խնդիր է դնում կուս. կազմակերպության առաջ՝ կարճ ժամանակամիջոցում առաջ բերել արմատական բեկումն ազգային փոքրամասնությունների մեջ տարվելիք աշխատանքներում, առանձնապես կուս. շինարարության, կուլտուրկենցաղային, կանանց մեջ մասսայական-քաղաքական լայն աշխատանք ծավալելու և կադրերի պատրաստման բնագավառներում:

Աշխատանքներն ազգային փոքրամասնությունների մեջ կամպանիոն ձևով տանելուց պետք է կտրականապես հրաժարվել: Աշխատանքը ազգային փոքրամասնությունների մեջ պետք է կրի սիստեմատիկ բնույթ և ըլինի, վորպես մեր ընդհանուր աշխատանքների օրգանական և կարևոր մի մասը:



Արձանագրելով կուս. կազմակերպության աշխատանքների վերակառուցման ուղղությամբ ձեռք բերած նվաճումները, կոնֆերանսը միաժամանակ հանձնարարում է Բաղկոմին և կուսակցական վողջ կազմակերպությանը՝ ձեռնարկել վճռական միջոցառումներ կուս. աշխատանքների արմատական վերակառուցման համար և իրականում կիրառել Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումը կուս. մասսայական աշխատանքների ծանրության կենտրոնը ցեխը, բրիգադը, արտադրության այդ վճռական օղակները փոխադրելու մասին: Ընտրել և ամրացնել ցեխային ու բրիգադային ղեկավար ակտիվի կայուն կադրեր, սահմանելով սիստեմատիկ, ամենօրյա ղեկավարություն նրանց աշխատանքների վրա (կուս. խմբակներ, կուս. կազմակերպիչներ): Հաճախակի լսել ստորին կուս. օրգանների զեկուցումները բջիջների բյուրոներում, Յերկոմում և կոնկրետ օգնության կարգով վերացնել նրանց աշխատանքներում նկատվող բացերը: Կարգավորել կատարման ստուգման գործը և դրական աշխատանքի փորձի փոխանակումը բջիջներում և կազմակերպության մեջ: Կազմակերպել կարճատև դասընթացքներ՝ կուս. ստորին ակտիվի պատրաստման և վերապատրաստման համար:

Արձանագրելով կուս. կազմակերպության աճման և սոց-կազմի կարգավորման բնագավառում ձեռք բերած նվաճումները, կոնֆերանսը միաժամանակ հանձնարարում է Բաղկոմին՝ մինչև կուս. կազմակերպության 3-րդ կոնֆերանսը կուսաճումը տանել այն հաշվով, վոր նոր ընդունվածների 80 տոկոսը լինի անմիջապես արտադրության մեջ աշխատող բանվորներ և հետևողականորեն կիրառել այն գիծը, վորպեսզի մինչև 3-րդ կոնֆերանսը Յերևանի քաղկազմակերպության բոլոր անդամների 40 տոկոսը լինեն արդյունաբերության մեջ աշխատող դազգյահի բանվորներ, վորոնց աշխատանքը սերտորեն կապակցել կազմակերպության շարքերի հետագա ամրացման հետ, մաքրելով կուսշարքերը խորթ և անպետք տարրերից:

Արձանագրելով կուսկազմակերպության Մարքս-Լենինյան դաստիարակության վորակի և ակտիվի վերապատրաստման անբավարար վիճակը, կոնֆերանսն առաջարկում է Բաղկոմին՝ կոնկրետ ձեռնարկումներ մշակել Մարքս-Լենինյան դաստիարակությունը բարձր աստիճանի հասցնելու համար: Այս տարվանից Յերևանում բացել յերեկոյան կոմհամալսարան և 2 հատ յերեկոյան կուսխորհրդային դպրոցներ: Միաժամանակ ակտիվի համար պարբերաբար կազմակերպել դասախոսություններ՝ տնտեսական-քաղաքական այժմեական խնդիրների շուրջը:

Արձանագրելով զգալի առաջխաղացում պրոֆմիության աշխատանքներում, նրա ձևերի ու մեթոդների վերակառուցման գործում, կոնֆերանսն այնուամենայնիվ ընդգծում է պրոֆմիության աշխատանքների վոչ բավարար վիճակը: Պրոֆմիութենական աշխատանքների հետագա վճռական և արմատական վերակառուցումը ըստ աշխատանքի և ղեկավարման նոր պայմանների, պետք է հանդիսանան կուսկազմակերպության աշխատանքի կարևոր օղակներից մեկը: Յերևանի կուսկազ-

35366

մակերպությունն ամեն կերպ պետք է ուժանդակի և ոգնի պրոֆ. կազմակերպություններին, բանվորական և աշխատավորական լայն մասսաներին համախմբելու կուսակցության և կառավարության մարտական լոզունգների ու վորոշումների շուրջը և ծավալելով սոցիալիստական աշխատանքի բարձր ձևերը՝ առաջ բերել մասսաների ստեղծագործական կարողի նոր, ավելի ուժեղ ալիք, կատարելու և գերակատարելու 1932 թվի պլանային բոլոր նախատեսումները:

Կոնֆերանսը հանձնարարում է Քաղկոմին և կուսակցական վողջ կազմակերպությանը՝ էլ ավելի ծավալել բոլշևիկյան ինքնաքննադատությունը և վճռականորեն պայքարել ներկա շրջանի գլխավոր վտանգ աջ ոպորտունիզմի, «ձախ» խոտորումների, տրոցկիստական մաքսանենգության, փտած լիբերալիզմի և կուս. գծից կատարվող բոլոր թեքումների դեմ—հանուն կուսակցության գլխավոր գծի հետևողական կիրառման, բոլշևիկյան զգոնության բարձրացման, կուս. շարքերի քաղաքական իդեական միաձուլության:

## ԲԱՆԱՁԵՎ ՔՎՀ-ԲԳՏ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(Ընդունված է միաձայն)

Լսելով ընկ. Զարիֆյանի հաշվետու զեկուցումը ՔՎՀ-ԲԳՏ-ի աշխատանքների մասին, Յերքաղ. 2-րդ կուսկոնֆերանսը գտնում է ՔՎՀ-ի քաղաքական գիծը ճիշտ և տարած գործնական աշխատանքները բավարար: Հաշվետու ժամանակաշրջանում ՔՎՀ-ԲԳՏ-ն իր աշխատանքներում ձեռք է բերել զգալի նվաճումներ, համառ և վճռական պայքար է մղել հանուն կուսակցության շարքերի միասնականության, հանուն կուսակցության գլխավոր գծի անաղարտության՝ ներկա շրջանի գլխավոր վտանգ աջ թեքման, «ձախ» ոպորտունիզմի ու նրանց նկատմամբ հաշտվողականության դեմ: ՔՎՀ-ն անողոք պայքար է մղել հակահեղափոխական տրոցկիզմի ռեցիդիվների առանձին դեպքերի և կոնտրաբանդայի՝ ինչպես նաև փտած լիբերալիզմի դեմ: ՔՎՀ-ն պայքարել է մեծապետական շովինիզմի, տեղական նացիոնալիզմի, դաշնակիզմի ամեն տեսակ վոտնձգությունների, արտահայտությունների և նրանց կոնկրետ կրողների դեմ:

Խորհրդային շինարարության գծով ՔՎՀ-ԲԳՏ-ն գործնականում աջակցել ու վճռական միջոցներ է ձեռք առել պետապարատի բարելավման համար: Աշխատանքի սոցիալիստական ձևերի ծավալման և արդֆինպլանների կատարման ապարատում կուսակցության մարտական դիրքերի ամրացման և կուսակցության ու կառավարության դիրեկտիվների անշեղ կատարման համար ՔՎՀ-ԲԳՏ-ն իր առորյա գործունեությամբ ռեալ ոգնություն է հասել կուսքաղկոմին և վերադաս որգաններին:

Կոնֆերանսը նշում է, վոր ՔՎՀ-ԲԳՏ-ն իր աշխատանքների ծանրության կենտրոնը դարձնելով կուսկազմակերպչական, կոոպերատիվ-մատակարարման, խորհրդային շինարարության խնդիրները, մասնավորապես վերջերս կարողացել է պլանավորել իր աշխատանքները և հետազոտությունները դարձնել ավելի արդյունավետ ու գործերի քննության միջին տեվողությունը, անցյալի համեմատությամբ, զգալիորեն



իջեցնել: Բարելավվել է Յերքաղկոմի և ՎՀ-ԲԳՏ-ի վորոշումների կատարման ստուգումը:

Կոնֆերանսը նշում է, վոր հաշվետու ժամանակաշրջանում ՔՎՀ-ԲԳՏ-ն զգալիորեն ծավալել է մասսայական աշխատանք, մի շարք գործարաններում կազմակերպել է աջակցող բրիգադներ, ընտրել կուս. քննիչների և արտաշտատային տեսուչների 60 հոգուց բաղկացած կադր՝ մեծ մասամբ բանվորներից: Բոլոր կարևոր հիմնարկ-ձեռնարկներում առանձնացած են հսկիչ պոստեր, վորպես արտադրության մեջ նկատվող և սպասվելիք թերությունների նկատմամբ սիգնալիզատորներ, կազմակերպել է կոլեգիայի մի շարք դռնբաց նիստեր (Յերկաթգիծ, կուսդպրոց, գյուղբանկ և այլն):

Կոնֆերանսը միաժամանակ գտնում է, վոր վերոհիշյալ նվաճումների հետ միասին քաղ. ՎՀ-ԲԳՏ-ն ունի դեռ ևս մի շարք թերություններ՝

1. Թույլ է յեղել ՔՎՀ-ԲԳՏ-ի կապը կուսբջիջների, ԼԿՅԵՄ կոնֆլիկտային հանձնաժողովի և բանվորական կոլեկտիվների հետ: Կուսակցական բջիջների և բանվորական դռնբաց մասսայական ժողովներում (սեսյաներում) աննշան քանակությամբ գործեր են քննվել:

2. Թույլ է յեղել բջիջների սիստեմատիկ և խորացրած ուսումնասիրությունը: Յեղած ուսումնասիրությունների մեծ մասը կրել են պատահական բնույթ, կապված առանձին կուս. ընկերների հարցերի հետ:

3. ՔՎՀ-ԲԳՏ-ն լայն չափերով չի ապահովել կուսակցական, պրոֆ. կազմակերպությունների և բանվորական կոլեկտիվների մասնակցությունն իր աշխատանքներին:

4. Թույլ է բանվոր կուս. ատենակալների մասնակցությունը կուս. կոլեգիայի նիստերին ու չի ձեռնարկվել կուս. քննիչների և արտաշտատային տեսուչների ընտրությունների գործին:

5. Թույլ է յեղել կապը բանգյուղթղթակիցների և մամուլի որգանների հետ: ՎՀ-ԲԳՏ-ի աշխատանքները սիստեմատիկաբար չեն լուսաբանվել մամուլում և լայն հասարակայնությունը հաղորդակից չի դարձված նրանց:

6. Անհրաժեշտ չափով չեն ընդգրկված ՎՀ.ԲԳՏ-ի աշխատանքներում «Թ. Հ.» ջոկատները, կուս քննիչները և արտաշտատային տեսուչները: Ուշադրություն չի դարձված նաև մասնագետների բրիգադների կազմակերպմանը: Մասնագետները ՎՀ-ԲԳՏ-ի աշխատանքներում ոգտագործվել են պատահականորեն:

7. Գործերի քննության ընթացքում վերջնականապես կիկվիդացիայի չեն յենթարկված ձգձգումները: Սեփական ապարատում հնարավոր պարզեցում չի մտցված:

8. Յերքաղկոմի և ՎՀ-ԲԳՏ-ի վորոշումների կատարման ստուգման գործը դեռևս իր բարձրության վրա չի գտնվում:

Նկատի ունենալով վոր ՔՎՀ-ԲԳՏ-ի աշխատանքների հիմնական խնդիրը հանդիսանում է պայքար հանուն կուսակցության շարքերի միասնականության, հանուն կուսակցության գլխավոր գծի անաղարտ կիրառման, կոնֆերանսը հանձնարարում է նորընտիր ՔՎՀ-ին՝

1. շարունակել և ուժեղացնել սիստեմատիկ, առորյա, վճռական ու

անողոք պայքարը ամեն տեսակ թեքումների և առաջին հերթին կուլակային ագենտուրայի, աջ թեքման, վորպես ներկա ետապի գլխավոր վտանգ «ձախ» օպորտունիզմի և նրանց հանդեպ հաշտվողականության, հակահեղափոխական տրոցկիզմի, փթած լիբերալիզմի, մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի ամեն տեսակի արտահայտությունների դեմ, մաքրելով կուս կազմակերպության շարքերը թեքումների կոնկրետ կրողներից, ինչպես նաև անդիսցիպլինար, քայքայված ու անկայուն տարրերից, անշեղ ղեկավարվելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի 31 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումներով:

2. Արդֆինպլանների լրիվ կատարման և սոցիալիստական շինարարության ասպարեզում, մասնավորապես ՀԿ (բ) ԿԿ և ԺԿԽ-ի՝ շինարարության մասին (հատկապես Յերևանի քաղաքային շինարարության մասին) մարտական դիրեկտիվների անշեղ կիրառման և հնգամյակի ավարտական տարում բոլշևիկյան տեմպերի ապահովման համար՝ ՔՎՀ-ԲԳՏ-ն պետք է կազմակերպի Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումների և ընկ. Ստալինի վեց ցուցմունքների անշեղ կիրառման ստուգումը, ոգնելով կուսակցական, տնտեսական և պրոֆկազմակերպություններին՝ նրանց առորյա աշխատանքներում:

3. Բյուրոկրատիզմի դեմ պայքարելը հանդիսանում է ՎՀ-ԲԳՏ-ի կարևորագույն խնդիրներից մեկը: Քաղ ՎՀ-ԲԳՏ-ն իր շուրջը պետք է համախմբի կուսակցական, կոմյերիտմիութենական ու պրոֆմիութենական ակտիվը բանվորական ու աշխատավորական լայն մասսաները, գործնականում ավելի ևս ուժեղացնելու համար իր պայքարը դիմազրկության, բյուրոկրատիզմի, վոլոկիտայի, անտնտեսավարության, թափթփվածության, խնամիության և պետապարատի այլ թերությունների դեմ՝ հանուն պետապարատի վճռական բարելավման ճկունացման և եժանացման:

4. Սիստեմատիկ և ծրագրային աշխատանք տանել կուս բջիջների ուսումնասիրության ասպարեզում, կանխելով և արմատախիլ անելով բոլոր հիվանդագին յերևույթները նրանց միջից: Անողոք պայքար մղել առանձին կոմունիստների մեջ տեղի ունեցող կենցաղային այլանդակությունների և ընդհանրապես կուս եթիկայի խախտումների դեմ:

5. Հետևել Մարքս-լենինյան ուսուցման բնագավառում կուս. դիրեկտիվների ճիշտ կիրառման գործին:

6. Լայն չափով կիրառել ՎՀ-ԲԳՏ կոլեգիաների և նախագահության նիստերը բանվորական բջիջներում և կոլեկտիվների մասսայական ժողովներում գումարելու պրակտիկան և այդ ճանապարհով ուժեղացնել կապը կուս բջիջների ԼԿՅԵՄ կոնֆլիկտային հանձնաժողովների և բանվորական լայն մասսաների հետ:

7. Աշխատանքները մասսային ավելի մոտեցնելու և բանվորական հսկողությունը պետ-ապարատի վրա ավելի ևս ուժեղացնելու նպատակով՝ բջիջներում, բանվորական կոլեկտիվներում, պրոֆմիութենական մասսայական ժողովներում, ՎՀ-ԲԳՏ-ի գործունեության և հետագա անելիքների մասին կազմակերպել սիստեմատիկ զեկուցումներ:

8. Հետազոտական աշխատանքներում ընդգրկել աշխատավորական լայն մասսաներին, կուս. քննիչներին, արտաշտատային տեսուչներին, բանվորական բրիգադներին, կանանց ակտիվին «Թ. Հ.» ջոկատներին և ակտիվ մասնագետներին:



9. Ուժեղացնել կապը բանգյուղթղթակիցների և մամուլի հետ, սիստեմատիկորեն լուսաբանելով մամուլում ՊԲՀ-ԲԳՏ-ի կատարած աշխատանքները:

10. Մաքսիմալ ուշադրություն դարձնել սեփական ապարատի պարզեցմանը, ճկունացման և ձգձգումների առանձին դեպքերը վերջնականապես լիկվիդացիայի յենթարկելու գործի վրա:

11. Պատշաճ բարձրության վրա դնել ՎՀ-ԲԳՏ-ի, ինչպես նաև կուսակցական որգանների դիրեկտիվների և վորոշումների կատարման ստուգման գործը:

12. Համառ պայքար մղել տնտեսական և առևտրական որգանների պահեստներում առաջացած ապրանքների կուտակման դեմ, գների խորհրդային քաղաքականության կիրառման համար:

13. Տրանսպորտի աշխատանքների վրա դարձնել մաքսիմալ ուշադրության հսկողություն ունենալ գուղերթ վագոնի, մեքենաների տնտհաշվարկի, տրանսպորտի շինարարության, քաղ. ԴՇՊՈ-յի աշխատանքների վերանորոգման, պլանների կատարման, վագոնների ժամանակին դատարկման ու բարձման և պարապուրդի կրճատման վրա:

14. Ունենալ սիստեմատիկ հսկողություն բանվորների կուլտ-կենցաղային սպասարկման գործի վրա:

15. Միլիցիայի աշխատանքներն իր բարձրության վրա դնելու համար ել ավելի սիստեմատիկ դարձնել հսկողությունը ֆինանս-տնտեսական աշխատանքների և բյուջետային դիսցիպլինայի կարգավորման հարցերի նկատմամբ:

16. Սոց-կուլտուրական աշխատանքների բնագավառում կատարել սիստեմատիկ ուսումնասիրություն, դպրոցների կանոնավորման, ուսանողության և ուսուցչության կուլտ-կենցաղային և տնտեսական դրության բարելավման, նրանց կազմի կարգավորման ու համատարած գրագիտության կիրառման վրա:

17. Մշակել մի շարք գործնական միջոցառումներ բանվորական շեֆությունը պետ-ապարատի վրա ուժեղացնելու և սոցիալիստական համատեղության սկզբունքը պետ-ապարատում լայն չափերով կիրառելու համար:

## ԲԱՆԱՁԵՎ ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ընդունված է միաձայն)

Յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հաջողություններին զուգընթաց՝ զգալի չափով աճում է քաղաքների աշխատավոր ազգաբնակչության թիվը, բարձրանում է աշխատավոր մասսաների կուլտուրական մակարդակը և կուլտ-կենցաղային պահանջները: Յերևանի քաղխորհուրդը, Հայկոմկուսի Կենտկոմի և Յրկոմի ղեկավարությամբ քաղաքային տնտեսության ասպարեզում կարողացավ ձեռք բերել զգալի հաջողություններ: Այսպես Յերևանում 1927 թ. 162.567 քառ. մետր խարխուլ բնակարանային ֆոնդը 5 տարվա ընթացքում ավելացել է 134.040 քառ. մետր նոր կառուցված բնակելի տարածությամբ: Յերևանում կառուցվել է ուժեղ հիդրո-

կայան է քաղաքային ելեկտրոցանց, նոր հյուրանոց: Հիմք է դրվել ելեքտրոքարշին, վորի քաղաքացիական շինարարության մասն արդեն ավարտվում է: Քաղաքի որական 130·000 դույլ տարողություն ունեցող ջրմուղը լայնացվել է և մոտ ժամանակամիջոցում կհասնի 4·500·000 դույլի:

Չնայած դրան, ՀԿ (բ) Կ Յերևանի քաղաքային կազմակերպության 2-րդ կուսկոնֆերանսը նշում է, վոր Յերևանի բնակարանային ու կոմունալ շինարարությունը դեռևս հետ է մնում ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքից և չի բավարարում աշխատավոր մասսաների աճող պահանջներին: Դրան զուգընթաց՝ կոնֆերանսն արձանագրում է, վոր Համկոմկուսի (բ) Կենտկոմի հունիսյան պլենումի՝ քաղաքային տնտեսության զարգացման մասին վորոշումներից հետո Յերևանի քաղխորհրդի աշխատանքների մեջ դեռ չի առաջացել վճռական շրջադարձ և գոյություն ունի 1931 տարվա շինարարական պլանների զգալի թերակատարում:

Յերևանի աշխատավոր մասսաների կուլտուր-կենցաղային պահանջները մաքսիմալ չափով բավարարելու նպատակով՝ 2-րդ կուս. կոնֆերանսը, հիմք ունենալով ԺԿԽ և Կենտկոմի վորոշումը («Խ. Հ.» № 11) առաջարկում է 1932 թվի ընթացքում Յերևանի քաղաքային և բնակարանային շինարարության գծով ներդրել 14 միլիոն ռուբլի, վորից՝

## ԲՆԱԿՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Առաջարկել Յերևանի քաղխորհրդին՝ 1932 թվի ընթացքում Յերևանում կատարել 3·982·000 ռուբլու բնակարանային շինարարություն:

2. Նորակառույց շենքերը ապահովել ջրմուղով, կոյուղով, ընդհանուր խոհանոցներով. Նոր շինարարական կոոպերատիվ ընկերություններում ունենալ փակ բաշխիչներ, մանկապարտեզներ, լվացքատներ, մսուրներ, ընդհանուր ճաշարաններ և ընթերցարան-գրադարաններ:

3. Մինչև 1932 թվի հունվարի 1-ը չավարտված բնակշինարարությունն ավարտել վոչ ուշ քան 1932 թ. մայիսի 1-ը:

4. Առաջարկել Ժողկոմխորհին և Մատժողկոմատին՝ արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցման, ինչպես նաև յեղածների ընդլայնման աշխատանքերին զուգընթաց ծավալել բնակշինարարությունըն այն հաշվով, վոր նրանց շահագործմանն անցնելիս բանվորությունն ապահովված լինի անհրաժեշտ բնակֆոնդով:

5. Առաջարկել քաղաքի բոլոր հիմնարկներին և գերատեսչություններին՝ իրենց գծով բացվող ԲՈՒՀ-երի և տեխնիկումների կադրերը լիովին ապահովել հանրակացարաններով:

6. Առաջարկել բոլոր պետական, հասարակական և տնտեսական կազմակերպություններին՝ իրենց կողմից հիմնարկության համար գրավեցրած բնակելի տարածությունն ազատելու նպատակով 1932 տարվա ընթացքում նախաձեռնել սեփական շենքերի կառուցումը և ազատված բնակելի տարածությունը տրամադրել Քաղխորհրդին, բանվորության բնակարանային դրությունը բարելավելու համար:

7. Նոր շինարարության ծրագրի իրագործման հետ միասին ծավալել յեղած բնակելի տարածության հիմնական վերանորոգումը, մաքսիմալ չափով ոգտագործելով տիպային նախագծերը:



## բ) ԿՈՄՈՒՆԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Յերևանի կոմունալ շինարարության և բարեկարգության համար 1932 թվի ընթացքում կատարել 6·800·000 ռուբլի ներդրում: Առաջարկել Յերևանի Քաղխորհրդին՝

Ելեկտրոքարշի գծով. Արագացնել աշխատանքներն այն հաշվով, վորպեսզի 1932 թվի 3-րդ յեռամսյակում այդպիսին ավարտվի և հանձնըվի շահագործման: Այդ նպատակով ներդրել 2·100·000 ռուբլի:

Քաղաքային ավտոտրանսպորտի գծով. Ձեռք բերել 3 ավտոբուս, 8 մարդատար մեքենա. իսկ շինարարությունը տրանսպորտով ապահովելու համար՝ 5 ապրանքատար մեքենա և անհրաժեշտ քանակությամբ ձիաքարշ տրանսպորտ, վորպիսի նպատակով ներդրել 425·000 ռուբլի և ընդարձակել գոյություն ունեցող ավտոտրանսպորտը:

Ջրմուղի գծով.— Ապահովել քաղաքի մագիստրալ գծերի կառուցման և լայնացման աշխատանքներն այն հաշվով, վորպեսզի մինչև քաղաք հասցրած ջրի ընդհանուր քանակը 1932 թվի վերջում լիովին ոգտագործվի: Այդ աշխատանքների համար 1932 թվի ընթացքում բաց թողնել մինչև 600·000 ռուբլի:

Կոյուղու գծով.— Նկատի ունենալով Յերևանի հակասանիտարական դրությունը և ասսենիզացիոն տրանսպորտի անբավարար կացությունը, անմիջապես ձեռնարկել կոյուղու և բիոլոգիական կայանի կառուցման աշխատանքներին, վորպիսի նպատակով 1932 թվի ընթացքում ներդրել 1·000·000 ռուբլի:

Քաղաքի սանիտարական դրությունը բարելավելու նպատակով լրացուցիչ կերպով ձեռք բերել ասսենիզացիոն և աղբատար ավտոմեքենաներ:

Բաղնիքներ և լվացքատուն. Նկատի ունենալով բաղնիքի կառուցման աշխատանքների թույլ տեմպերը և այն հանգամանքը, վոր յեղած բաղնիքները չեն բավարարում ազգաբնակչության պահանջներին, արագացնել և վոչ ուշ քան 1932 թվի մայիսի 1-ն ավարտել Յերևանի նոր բաղնիքի կառուցումը, ներդրելով 400·000 ռ.:

Կենցաղը վերակառուցելու և կանանց արտադրության մեջ ներգրավելու, ինչպես նաև հիմնարկ ձեռնարկությունների կարիքները հոգալու նպատակով՝ 1932 թվին ավարտել մեխանիկական լվացքատան կառուցումը, վորի համար բաց թողնել 200·000 ռուբլի:

Հյուրանոց.—Սկսել 2-րդ հյուրանոցի 3-րդ կորպուսի կառուցման աշխատանքները, իսկ 1-ին և 2-րդ կորպուսների աշխատանքներն ավարտել և շահագործման հանձնել վոչ ուշ քան 1932 թվի մայիսի 1-ը, վորի համար հատկացնել 600·000 ռուբլի:

Բարեկարգման գծով.— ա) Յեղած եսկիզային հատակագծի հիման վրա կատարել քաղաքի շրջանների հատակագծման աշխատանքները և 1932 թվի առաջին յեռամսյակի վերջում ավարտել արդյունաբերական շրջանի հատակագծումը:

բ) Սկսել Կուլտուրայի և հանգստի պարկի կառուցումը, վորի համար հատկացնել Յերևանի—Քանաքեռ խճուղու և Գեղարչայի մեջ ընկած 175 հեկտար հողամասը:

գ) Ծառատնկման յենթարկել քաղաքի հյուսիսային լեռնալանջերն ու քաղաքի փողոցները: Այդ աշխատանքները ծավալել այն հաշվով, վորպեսզի 1932 թվին տնկվի առնվազն 456·000 ծառատունկ:

դ) Առաջարկել բնակկոոպմիությանը` 1932 թվին մայթել կոոպերատիվ թաղամասի փողոցները և բոլոր նոր շենքերի բակերում ու փողոցներում կատարել ծառատնկում:

յե) Ուժեղացնել մայթերի կառուցման և փողոցների սալահատակման աշխատանքները:

զ) Ձեռք բերել և գործի դնել 3 ջրցան մեքենա:

է) Մեկ կիլոմետր յերկարությամբ բացել քաղաքի շրջանաձև փողոցը:

ը) Ձեռք բերել յերկու նոր հրշեջ մեքենաներ: «ա»—«ը» կետերում հիշված բարեկարգման աշխատանքների համար ներդրել 1·250·000 ռ.:

թ) Քաղաքի ծայրամասերը լուսավորելու և ելեքտրոցանցի կառուցման աշխատանքների համար բաց թողնել 200·000 ռուբլի:

Նկատի ունենալով ելեքտրո-էներգիայի խոշոր պահանջը կենցաղային, և կոմունալ ձեռնարկությունների արդյունաբերական կարիքների համար, ինչպես նաև այն հանգամանքը, վոր առաջին և յերկրորդ Յերգեսներն ի վիճակի չեն լինի բավարարել այդ պահանջը, առաջարկել Յերևանի քաղխորհրդին ձեռնարկել 3-րդ Յերգեսի կառուցման ուսումնասիրությանը, կապելով այդպիսին Զանգվի լճի հիմնադրման և նրա ափերում ընկած անջրդի տարածությունները վոռոգելու պրոբլեմի հետ:

Յերևան քաղաքի նորմալ զարգացման և նրա հետ կապված բանջարապտղաբուծական հարցի հաջող լուծման նպատակով, գտնել անհրաժեշտ ընդլայնելու քաղաքի սահմանագիծը: Վ. ու Ն. Ննգավիթները, Նոր Կողբը, Վ. և Ն. Չարբախները, Նորագավիթը, Նոր Մալաթիան և Քանաքեռը վարչական ու տերիտորիալ տեսակետից միացնել քաղաքին:

## ՏԵՂԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Արձանագրելով, վոր քաղաքը սոցիալիստական վերակառուցման յենթարկելու խնդիրների հաջող իրագործման հիմնական նախադրյալն է քաղխորհրդի գործունեության նյութական բազայի ամրացումը, անհրաժեշտ համարել առավելագույն չափով ուժեղացնել տեղական բյուջեյի հիմնական աղբյուրները, տեղական արդյունաբերությունն ու կոմունալ ձեռնարկությունները: Քաղաքի նյութական-արտադրական բազան ամրապնդելու նպատակով գտնել անհրաժեշտ Քաղխորհրդի իրավասության փոխանցել արդյունաբերական ու շինանյութեր արտադրող այն ձեռնարկությունները, վորոնք ունեն տեղական նշանակություն:

2. Քաղաքի լայն աշխատավոր մասսաները կենսական անհրաժեշտ մթերքներով ապահովելու նպատակով` գտնել անհրաժեշտ կառուցելու Յերևանում սնունդ-համի կոմբինատ:



3. Խիստ կարևոր համարելով ելեքտրոէներգիայի կենցաղային ոգտագործումը, գտնել անհրաժեշտ քաղաքում կառուցելու ջերմիչ պարագաների գործարան:

4. Կոմունալ ձեռնարկությունների շահագործումը ռացիոնալացնելու նպատակով` առաջարկել քաղխորհրդին` ավարտել բոլոր արդյունաբերական և կոմունալ ձեռնարկությունները լիակատար տնտեսական հաշվարկի փոխադրելու աշխատանքները: Միաժամանակ միջոցներ ձեռք առնել իր կոչման բարձրության վրա դնելու հաշվային գործը տեղերում:

## ՍՈՑ ԿՈՒԼՏ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

1. Առաջարկել Յերևանի պետ-թատրոնը կառուցող կոմիտեյին` ուժեղացնել շինարարական աշխատանքների թափն այն հաշվով, վորպեսզի 1932 թվի ընթացքում թատրոնի քարային աշխատանքներն ավարտվեն, իսկ 33 թ. հանձնվի շահագործման:

2. Առաջարկել Հայպետկինոյին` 1932 թվին Յերևանում կառուցել կինո-թատրոն:

3. Առաջարկել ՀԱՄԽ-ին` 1932 թվին ձեռնարկել աշխատանքի պալատի կառուցման և նույն տարում ավարտել աշխատանքի 50 տոկոսը:

4. Առաջարկել Յերևանի քաղխորհրդին` ուժեղացնել կառուցվող 7-ամյա դպրոցի, «Շահումյանի» անվան դպրոցի 3-րդ հարկի կառուցման աշխատանքները. բացի դրանից 1932 թվի ընթացքում նախատեսնել կառուցելու յերկու 7-ամյա և 4 շրջանային դպրոցներ և 3 մանկապարտեզ: Ձեռնարկել նաև պիոներական տան կառուցմանը` իր ընթերցարանով ու թատրոնով: Այդ նպատակով ներդրել 1·500·000 ռ.:

5. Հիվանդանոցային շինարարության գծով, բացի ընթացիկ տարում սկսած սուր-վարակիչ հիվանդանոցի ավարտումից, 1932 թվին սկսել և ավարտել դեզենֆեկցիոն կայանի և չուտափույթ ոգնության շենքի կառուցումը, իսկ գործարանային շրջաններում 150 մահճակալ ունեցող միասնական դիսպանսերի շինարարությունը կատարել 60 տոկոսով: Միաժամանակ սկսել և ավարտել մեքենայացված ճաշարանի կառուցման աշխատանքները, ներդրելով 1·200·000 ռուբլի:

## ՏԵՂԱԿԱՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1932 թվի բնակարանային, կոմունալ և սոց-կուլտ շինարարության պլանների կենսագործումը լրիվ ապահովելու նպատակով առաջարկել Յերևանի Քաղխորհրդին`

ա) Մինչև 1932 թվի հունվարի 20-ը հատկացնել կառուցվող բոլոր ոբյեկտների հողամասերը:

բ) Մինչև մարտի 1-ն ավարտել բոլոր շինարարական ոբյեկտների նախագծերը:

գ) Հաշվի առնել շինարարության համար պահանջվող անհրաժեշտ բանվորական ուժի կարիքը և այժմվանից անցնել բանուժի հավաքա—

*գրման ու կադրերի պատրաստման ու վերապատրաստման աշխատանքներին:*

*դ) Ոգտագործելով կենտկոմբանկի և Համկոմբանկի վարկերը՝ անմիջապես ձեռնարկել շինանյութերի մթերման աշխատանքներին և պատրաստված շինանյութերը փոխադրել շինարարության վայրը:*

*ե) Մինչև 1932 թ. հունվարի 20-ը Հայմատաքի հետ կնքել պայմանագիր, թե տեղական և թե ներմուծվող շինանյութերի մատակարարման համար:*

*զ) Առաջարկել Հայտնարկոոպին՝ ծավալել տեղական շինանյութերի արտադրությունը և լայն չափերով կատարել աշխատանքի պրոցեսների մեքենայացումը, այն հաշվով, վորպեսզի 32 թվին պլանով նախատեսնված օբյեկտները լրիվ կերպով ապահովվեն տեղական շինանյութերով:*

*է) Միջոցներ ձեռք առնել ներմուծվող դեֆիցիտային շինանյութերը մաքսիմալ չափերով տեղական վոչ դեֆիցիտային շինանյութերով փոխարինելու համար:*

*ը) Առաջարկել բոլոր պետական և տնտեսական հիմնարկություններին՝ Յերևանի բարեկարգման ծախսերին մասնակցել: Առաջարկել Յերևանի քաղխորհրդին՝ 10 որվա ընթացքում ԺԿԽ-ի քննությանը ներկայացնել այդ ծախսերի բաշխման նախագիծը:*

---



# ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

## ԱՆԴԱՄՆԵՐ

1. Աղասի Խանջյան
2. Սեդրակ Ոթյան
3. Պետիկ Պետրոսյան
4. Հովհաննես Մուկացյան
5. Աշոտ Ստեփանյան
6. Մելքոն Գրիգորյան
7. Արծվիկ Բատիկյան
8. Հրաչյա Դեմիրչյան
9. Պողոս Մկրտչյան
10. Յերվանդ Խոջամիրյան
11. Հայրիկ Ջհանգուլյան
12. Լեվոն Հովսեփյան
13. Սուսաննա Իշխանյան
14. Արամայիս Յերզնկյան
15. Ալի Թաղի Զադե
16. Ադո Ադոյան
17. Սամսոն Գաբրիելյան
18. Ընձակ Վահանյան
19. Հակոբ Սարգսյան
20. Վարդան Գրիգորյան
21. Զավեն Մարուխյան
22. Սուրեն Խոջայան
23. Արտո Սահակյան
24. Արտուշ Փալանջյան
25. Բագրատ Վարդանյան
26. Գարեգին Ազարբայան
27. Յեղիա Պապիկյան
28. Գեվորգ Քոչար
29. Արտաշես Ազաբաբյան
30. Գեղամ Մխիթարյան
31. Սամվել Պողոսյան
32. Ոդիսեյ Խոնիդի
33. Մանուկ Բաբլոյան
34. Սմբատ Տերտերյան
35. Խաչիկ Ադիբեկյան
36. Արմենակ Ղազարյան
37. Առաքել Նիկողոսյան
38. Գարեգին Անտոնյան
39. Մանուկ Ուլոյան
40. Յենոք Շահինյան
41. Մանուշ Մկրտչյան
42. Լամով Գրիգորիյ
43. Ազատ Մելքոնյան
44. Պերճ Տարոնյան
45. Գարեգին Յեղիազարյան
46. Սեդրակ Սարգսյան
47. Մովսես Ռոստոմյան
48. Դանիել Դզնունի
49. Ռնիկ Մաքեվոսյան
50. Հմայակ Յերզնկյան
51. Վահան Ղազարյան
52. Միսակ Պետրոսյան
53. Հմայակ Դավթյան
54. Մկրտիչ Գեվորգյան
55. Մահմեդով Հուսեյն
56. Նիկոլայ Գալոյան
57. Միքայել Սահակյան
58. Քալանթար Քալանթարյան
59. Նվարդ Ղազարյան

## ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

1. Ներսես Փափազյան
2. Ստեփան Կոքզեվ
3. Կարիկ Աղազադյան
4. Գեվորգ Մանուկյան
5. Արշակ Յեսայան
6. Աստղիկ Բունյաթյան
7. Գուրգեն Վասիլյան
8. Հովհաննես Ամատունի
9. Տոնիկ Դարբինյան
10. Հովհաննես Գասպարյան
11. Զինյաթ Խայյեվա
12. Թադեվոս Պետրոսյան
13. Արշավիր Հարությունյան
14. Տանատ Դանիելյան
15. Բագրատ Խաչատրյան
16. Հայկ Գրիգորյան
17. Ստեփան Կուրտիկյան
18. Արմո Սարյան
19. Պետյա Շահբաձե
20. Արմեն Զաչյան

## ՔԱՂ· ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1· Աղասի Գալոյան
2· Մեսրոպ Զարիփյան
3· Անուշավան Թադեվոսյան
4· Արամ Վարդապետյան
5· Մինաս Սարգսյան
6· Ռուբեն Բարսեղյան
7· Կարապետ Բեկչյան
8· Վահան Բերբերյան
9· Սուրեն Միքայելյան
10· Գեվորգ Մելքումյան
11· Հարություն Արիջանյան
12· Ալեքսանդր Ուլիխանյան
13· Արիստակես Ստեփանյան
14· Ալեքսան Լալայան
15· Մաթեվոս Սաղաթելյան
16· Մելիք Ավետիսյան
17· Համբարձում Հախվերդյան
18· Սմբատ Սեդրակյան
19· Մովսես Ղարիբյան
20· Սեդրակ Ավետիսյան
21· Մանուկ Մանրիկյան
22· Միքայել Վարդանյան
23· Իվան Մինասյան
24· Վարդան Բաղդասարյան
25· Ստեփան Զադոյան
26· Ստեփան Խաչատրյան
27· Բաղդասար Արոյան
28· Ծերուն Ավագյան
29· Գեորգիյ Սահակյան
30· Մուշեղ Ավետիսյան
31· Միքայել Ցեղիազարյան
32· Խաչատուր Ունանյան
33· Ներսես Պետրոսյան
34· Հայրո Գեվորգյան
35· Աղասի Տատյան
36· Ավետիս Կարապետյան
37· Բենիամին Գեվորգյան
38· Վաղարշակ Ոդաբաշյան
39· Անուշ Փորսուղյան
40· Մկրտիչ Մխիթարյան
41· Արտեմ Մակարյան
42· Աշխեն Անդրիասյան
43· Արշակ Հովհաննեսյան
44· Սուրեն Խաչատրյան
45· Արամ Մարքարյան
46· Դավիթ Խաչատրյան
47· Աղասի Հովսեփյան
48· Գեղամ Ղարիբջանյան

## ՔԱՂԿՈՄԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1· Վաչե Հարությունյան
2· Նիկոլ Վոսկերչյան
3· Գառնիկ Խաչատրյան
4· Արտավազդ Խուրշուդյան
5· Սամսոն Մարջանյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0184363

ԳԻՆԸ 25 ԿՈՊ. ($1^{3}/_{8}$ մ.)

РЕЗОЛЮЦИИ II-ой ПАРТКОНФЕРЕНЦИИ
ЭРИВАНСКОЙ ГОРОДСКОЙ ОРГАНИЗАЦИИ

Госиздат ССР Армении
Эривань—1932